

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ**

« » ————— 2014թ. N -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ 2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ և 14-րդ հոդվածների դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական հողօգտագործողներին 2015-2017 թվականներին հասցեական պետական աջակցության տրամադրման ծրագիրը՝ համաձայն հավելվածի,

2. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ մինչև 2015 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացնել առաջարկություն՝ սույն որոշման առաջին կետով հաստատված ծրագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ:

3՝ Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ 2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԵՎ ԿԵՐԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԵՐԻ ՈՒ ԲԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՎԻՃԱԿԸ

1. Գյուղատնտեսությունը երկրի պարենային անվտանգության ապահովման գլխավոր ոլորտն է, հանրապետության տնտեսական զարգացման ռազմավարության մեջ այն ունի առանցքային դեր և նպատակային քաղաքականության իրականացման ու առկա ներուժի լիարժեք օգտագործման շնորհիվ հնարավոր է որոշակիորեն լուծել պարենային ապահովվածության հիմնախնդիրը:

2. Քաղաքականությունը պետք է նպատակաուղղվի գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների արտադրության ծավալի աճին, ներմուծվող արտադրանքը տեղական արտադրությամբ փոխարինմանը, վերջինս հնարավոր է համարվում պետական աջակցության տարբեր մեխանիզմների կիրառմամբ:

3. Գյուղատնտեսական որոշ մշակաբույսեր ապահովում են ցածր եկամտաբերություն, իսկ դրանց տեղական արտադրության ծավալներն ապահովում են ինքնաբավության ցածր մակարդակ: Առաջնահերթ խնդիր է այդ մշակաբույսերի ցանքատարածությունների, արտադրության ծավալների ավելացումն ու ինքնաբավության մակարդակի բարձրացումը, մասնավորապես դա վերաբերում է հացահատիկային մշակաբույսերին և եգիպտացորենին:

4. Առաջնահերթ խնդիր է սեփական արտադրության հաշվին պարենային հացահատիկի և անասնապահությունն անասնակերով ապահովվածության մակարդակի բարձրացումը, որը բխում է նաև հանրապետության գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի լիարժեք օգտագործման անհրաժեշտությունից:

5. Ստորև ներկայացվում են Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալները 2005-2013 թվականներին հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսերի ցանքատարածությունների, միջին բերքատվության և համախառն բերքի ծավալների մասին:

Տարեթիվը	Ցանքատարածությունը (հա)	Միջին բերքը (g/հա)	Համախառն բերքը (տոննա)
2005	209590	19.4	396180
2006	182406	13.3	212544
2007	176213	25.9	452538
2008	172838	24.1	415353
2009	171633	22.6	374859
2010	159307	20.7	326423
2011	157812	27.9	440671
2012	172206	26.5	456112
2013	178367	30.8	548765

* Յուրաքանչյուր տարի հատիկաընդեղեն մշակաբույսերի ցանքային տարածությունը տատանվում է 2000 հեկտարի սահմաններում

6. Ստորև ներկայացվում են Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալները 2005-2013 թվականներին լրիվ հասունացման հատիկի համար կատարված եգիպտացորենի ցանքատարածությունների, միջին բերքատվության և համախառն բերքի ծավալների մասին:

Տարեթիվը	Ցանքատարածությունը (հա)	Միջին բերքը (g/հա)	Համախառն բերքը (տոննա)
2005	3163	44.7	14127
2006	2557	33.3	8421
2007	3573	52.8	18680
2008	3971	53.1	21172
2009	2639	57.7	15232
2010	2791	46.7	12751
2011	3542	54.3	19120
2012	3075	62.2	19131
2013	3115	67.1	20906

7. Համաձայն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և Հայաստանի Հանրապետության մարզպետարանների մասնագետների կողմից կատարված նախնական կանխատեսումների, 2014 թվականին հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսերի ցանքային տարածությունը կկազմի շուրջ 191000 հեկտար, որից՝ եգիպտացորենինը շուրջ 3400 հա:

8. Վերջին տարիներին հացահատիկային մշակաբույսերի և եգիպտացորենի ցանքատարածությունների ավելացումը և արտադրության ծավալների կտրուկ աճը պայմանավորված է 2010 թվականից սկսված տարբեր աջակցության ծրագրերով, որոնց շրջանակներում հանրապետություն են ներկրվել աշնանացան ցորենի, գարնանացան գարու, եգիպտացորենի բարձր վերարտադրողականություն ապահովող սերմացուներ, հանքային պարարտանյութեր և դիզելային վառելանյութ, որոնք ծրագրերի դրույթներին համապատասխան տրամադրվել են գյուղատնտեսական տնտեսավարողներին:

9. Բուսաբուծության բնագավառի ուսումնասիրությունները և վերլուծությունները ցույց են տալիս, որ՝

1) անջրդի պայմաններում, միավոր տարածքից, ամենաքիչ եկամուտ է ապահովվում հատկապես հացահատիկային մշակաբույսերից.

2) գյուղատնտեսական մշակաբույսերի եկամտաբերությունը տարեցտարի նվազում է՝ մշակության նպատակով կատարվող ծախսերի ավելացման պատճառով.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հողօգտագործողներին հատկացվող պետական աջակցության շարունակական ծրագրերը նպաստում են տևականորեն չմշակված վարելահողերի շրջանառության մեջ ներգրավմանը, գյուղատնտեսական մշակաբույսերի ագրոտեխնիկական միջոցառումների բարելավմանը, ցանքատարածությունների, համախառն բերքի, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը և տնտեսական աճի ապահովմանը:

II ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

10. Ծրագրի նպատակն է՝ հանրապետության հողօգտագործողներին հասցեական աջակցության միջոցով հողային ռեսուրսների նպատակային

օգտագործման մակարդակի բարձրացումը, արդյունքում հացահատիկային մշակաբույսերի արտադրության ծավալների և տնտեսավարողների եկամուտների ավելացումը:

11. Ծրագրի խնդիրը Հայաստանի Հանրապետության մարզերում գյուղատնտեսությամբ զբաղվող ֆիզիկական, իրավաբանական անձանց սեփականության և/կամ վարձակալության իրավունքով պատկանող մշակովի հողատարածքների վրա հացահատիկային մշակաբույսերի և/կամ գարնանը կատարված եգիպտացորենի ցանքատարածությունների ավելացումն է և ագրոտեխնիկական միջոցառումների պահանջների կիրառման ապահովումը:

III. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

12. Սույն ծրագրով սահմանվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցության տրամադրման գործընթացի հետ կապված հարաբերությունները:

13. Գյուղատնտեսական հողօգտագործողներին հասցեական պետական աջակցություն տրամադրվում է համաձայն սույն ծրագրով սահմանված դրույթների:

14. Սույն ծրագրի իմաստով պետական աջակցությունը Հայաստանի Հանրապետության մարզերում գյուղատնտեսությամբ զբաղվող ֆիզիկական, իրավաբանական անձանց սեփականության և/կամ վարձակալության իրավունքով պատկանող մշակովի հողատարածքների վրա փաստացի ցանված հացահատիկային մշակաբույսերի և/կամ գարնանը կատարված եգիպտացորենի ցանքատարածությունների յուրաքանչյուր հեկտարի համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից 40000 դրամ անհատույց դրամական հատկացումն է.

1) սույն ծրագրի շրջանակներում հացահատիկային մշակաբույսերի փաստացի կատարված ցանքի համար պետական աջակցությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի նոյեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին» N 713 և 1998 նոյեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերն ըստ

բարձրության նիշերի դասակարգելու մասին» N 756 որոշումներով համապատասխանաբար հաստատված՝ սահմանամերձ և բարձր լեռնային համայնքներում.

2) Ծրագրի իրականացման ընթացքում, յուրաքանչյուր տարի հացահատիկային մշակաբույսերի փաստացի կատարված ցանքի համար պետական աջակցությունը տրամադրվում է՝ նախորդ տարի փաստացի կատարված աշնանացանի և տվյալ տարի փաստացի կատարված գարնանացանի համար:

3) սույն ծրագրի շրջանակներում գարնանը եգիպտացորենի փաստացի կատարված ցանքի համար պետական աջակցությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում:

15. Տնամերձ հողատարածքները սույն ծրագրի շրջանակներում չեն համարվում պետական աջակցության օբյեկտ:

16. Գյուղատնտեսական հողօգտագործողների կողմից փաստացի կատարված հացահատիկային մշակաբույսերի և/կամ գարնանը կատարված եգիպտացորենի ցանքերի զբաղեցրած տարածքներից ավելի տարածքի մասին տեղեկատվություն ներկայացնելը հիմք է գյուղատնտեսական հողօգտագործողին տվյալ տարվա պետական աջակցությունից զրկելու համար, իսկ նույն անձի կողմից հաջորդ տարում փաստացի կատարված հացահատիկային մշակաբույսերի և/կամ գարնանը կատարված եգիպտացորենի ցանքերի զբաղեցրած տարածքներից ավելի տարածքի մասին տեղեկատվություն կրկին ներկայացնելը հիմք է տվյալ գյուղատնտեսական հողօգտագործողին երեք տարվա համար պետական աջակցությունից զրկելու համար:

17. Ուսումնասիրության արդյունքները ելակետ ունենալով՝ համայնքի գյուղատնտեսական հողօգտագործողների (ֆիզիկական և իրավաբանական անձանց) ընդհանուր թվի 5 տոկոսը գերազանցող թվով գյուղատնտեսական հողօգտագործողների կողմից փաստացի կատարված հացահատիկային մշակաբույսերի և գարնանը կատարված եգիպտացորենի ցանքերի զբաղեցրած տարածքներից ավելի տարածքի մասին տեղեկատվություն ներկայացնելը հիմք է համայնքին տվյալ տարում նախատեսված պետական աջակցությունից զրկելու համար:

IV. ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

18. Տեղական ինքնակառավարման մարմինները և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության խորհրդատվական կառույցներն իրականացնում են գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցություն տրամադրման ծրագրի մեկնարկի և պայմանների մասին իրազեկման աշխատանքներ՝ համայնքներում, տեսանելի վայրում համապատասխան հայտարարություններ փակցնելով:

19. Գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցություն տրամադրվում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից՝ համաձայն սույն ծրագրի 29-րդ կետի՝ 25-րդ կետում նշված արձանագրության հիման վրա, որում նշվում է համայնքը, հողօգտագործողի անուն, ազգանուն, հայրանունը, անձնագրի սերիան ու տրման օրը, անձնագիրը հատկացնող մարմինը, սեփականության և/կամ վարձակալության վկայականի համարը, փաստացի կատարված հացահատիկային մշակաբույսերի և/կամ գարնանը կատարված եգիպտացորենի ցանքատարածությունը, վճարման ենթակա գումարը և հողօգտագործողի ստորագրությունը՝ համաձայն ձև N 1-ի:

20. Պետական աջակցություն ակնկալող գյուղատնտեսական հողօգտագործողները տեղական ինքնակառավարման մարմիններ են ներկայացնում դիմում, նշելով իրենց կողմից փաստացի կատարված հացահատիկային մշակաբույսերի և/կամ գարնանը կատարված եգիպտացորենի ցանքատարածության չափը և կից ներկայացնելով անձնագրի, սեփականության և/կամ վարձակալության վկայականի պատճենները:

21. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ստեղծվում է ժամանակավոր աշխատանքային խումբ, որը հողօգտագործողների դիմումների հիման վրա իրականացնում է փաստացի կատարված հացահատիկային մշակաբույսերի և/կամ գարնանը կատարված եգիպտացորենի ցանքերի ուսումնասիրություն:

22. Աշխատանքային խումբը փաստացի ցանքերի ուսումնասիրության արդյունքում կազմում է արձանագրություն՝ համաձայն ձև N 1-ի, որը հաստատվում է

համապատասխան համայնքի ավագանու անդամների առնվազն 50 տոկոսի կողմից (այսուհետ՝ հաստատված արձանագրություն):

23. Հաստատված արձանագրությունները տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ներկայացվում են համապատասխան մարզպետարաններ:

24. Տեղական ինքնակառավարման մարմինները, գործընթացի հրապարակայնությունը և թափանցիկությունը ապահովելու նպատակով, հաստատված արձանագրությունների պատճենները փակցնում են համայնքներում՝ տեսանելի վայրում:

25. Մարզպետարաններում հաստատված արձանագրությունները ամփոփվում են և ներկայացվում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն:

26. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը իր համապատասխան ստորաբաժանման միջոցով, համապատասխան մարզպետարանի և համայնքապետարանի ներկայացուցիչների հետ համատեղ՝ հիմք ընդունելով հաստատված արձանագրությունները, Հայաստանի Հանրապետության մարզերում իրականացնում է ընտրանքային ուսումնասիրություն՝ առնվազն 20 տոկոս հողօգտագործողների ընդգրկմամբ:

27. Համապատասխան համայնքի ղեկավարը՝ համաձայն սույն ծրագրի 26-րդ կետի ուսումնասիրությունների իրականացման ընթացքում, անհրաժեշտության դեպքում, ներկայացնում է պետական աջակցություն ստանալու համար հողօգտագործողի կողմից ներկայացված փաստաթղթերը կամ այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

28. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը ուսումնասիրության արդյունքում սույն ծրագրի 16-րդ և 17-րդ կետերով նախատեսված խախտումները հայտնաբերելու դեպքում իրավունք ունի կիրառելու նույն կետերով սահմանված պատասխանատվության դրույթները:

29. Ուսումնասիրության արդյունքների հիման վրա Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը բանկային համակարգի միջոցով իրականացնում է պետական աջակցության գումարների վճարումը հողօգտագործողներին:

V ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՆ

30. Հաշվի առնելով, որ վերջին տարիներին ի շնորհիվ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող աջակցության ծրագրերի, հացահատիկային մշակաբույսերի ցանքային տարածություններն ունեն ավելացման միտում, ծրագրի բյուջեն կարող է ըստ տարիների լինել խիստ փոփոխական: Ծրագրի իրականացման տարիներին (2015-2017թթ) ՀՀ մարզերի բարձր լեռնային և սահմանամերձ համայնքներում հացահատիկային մշակաբույսերի ցանքային տարածությունները կանխատեսվում են 70000-75000 հեկտարի սահմաններում, իսկ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում եգիպտացորենի ցանքատարածությունները՝ 4000 հեկտարի սահմաններում:

31. Հացահատիկային մշակաբույսերի և եգիպտացորենի ցանքատարածությունները միասին ծրագրի իրականացման տարիներին 74000-79000 հեկտար կազմելու դեպքում ծրագրի բյուջեն կկազմի 2.96 -3.16 միլիարդ դրամի սահմաններում:

32. Ծրագրի իրականացման տարիներին (2015-2017թթ.) կանխատեսվում է հացահատիկային մշակաբույսերի և եգիպտացորենի ցանքատարածությունների ավելացում, որի արդյուքում կատարված փաստացի ցանքերի համար ծրագրի բյուջեն համամասնորեն կավելանա:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«<< ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՓԱՍՏԱՑԻ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇՆԱՆԱՑԱՆ ՈՒ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ
ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԵՎ ԳԱՐՆԱՆԸ ԿԱՏԱՐՎԱԾ ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ
ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ**

«<< մարզի համայնքի ղեկավարի հրամանով ստեղծված աշխատանքային խումբը ներկայացված դիմումների հիման վրա ուսումնասիրելով համայնքի հողօգտագործողների կողմից փաստացի կատարված աշնանացան ու գարնանացան հացահատիկային մշակաբույսերի և գարնանը կատարված եգիպտացորենի ցանքատարածությունները, հավաստում է, որ համայնքում հողօգտագործողների կողմից փաստացի կատարվել են հեկտար հացահատիկային մշակաբույսերի և գարնանը կատարված եգիպտացորենի ցանքեր, որից՝

- աշնանացան ցորեն հա
- գարնանացան ցորեն հա
- գարնանացան գարի հա
- աշնանացան գարի հա
- այլ հացահատիկ հա
- գարնանը ցանված եգիպտացորեն հա:

Կցվում է «<< մարզի համայնքի 201...թ հացահատիկային մշակաբույսերի և գարնանը եգիպտացորենի փաստացի ցանք կատարած հողօգտագործողների ցուցակը:

Համայնքի ղեկավար՝

Հանձնաժողովի անդամներ՝

Ավագանու անդամներ

ՑՈՒՑԱԿ

«..... մարզի համայնքի 201...թ աշնանացան ու գարնանացան հացահատիկային մշակաբույսերի և գարնանը եգիպտացորենի փաստացի ցանք կատարած հողօգտագործողների

Հ/հ	Անուն, ազգանուն, հայրանուն	Անձնագրի սերիան	Տրման օրը և ում կողմից	Սեփ./վարձակ վկայականի համարը	Փաստացի կատարվել է ցանք				Աջակցութ. չափը դրամ	Ստորագրութ.
					Յորեն	Գարի	Այլ հացահ.	Եգիպտացորեն		
Ընդամենը										

Համայնքի ղեկավար՝

Հանձնաժողովի անդամներ՝

Ավագանու անդամներ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ 2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

1. Անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մայիսի 15-ի N511-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի գյուղատնտեսությունը և գյուղը բաժնի առանցքային դրույթներից է գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման միջոցառումների իրականացումը, այդ թվում սահմանամերձ և բարձր լեռնային համայնքներում հացահատիկային մշակաբույսերի մշակման սուբսիդավորման միջոցով:

Գյուղատնտեսությունը երկրի պարենային անվտանգության ապահովման գլխավոր ոլորտն է, հանրապետության տնտեսական զարգացման ռազմավարության մեջ այն ունի առանցքային դեր և նպատակային քաղաքականության իրականացման ու առկա ներուժի լիարժեք օգտագործման շնորհիվ հնարավոր է որոշակիորեն լուծել պարենային ապահովվածության հիմնախնդիրը:

Գյուղատնտեսական որոշ մշակաբույսեր ապահովում են ցածր եկամտաբերություն, իսկ դրանց տեղական արտադրության ծավալներն ապահովում են ինքնաբավության ցածր մակարդակ: Մասնավորապես խիստ ցածր եկամտաբերություն են ապահովում հացահատիկային մշակաբույսերը՝ հանրապետության բարձր լեռնային և սահմանամերձ գոտիներում:

Առաջնահերթ խնդիր է սեփական արտադրության հաշվին պարենային հացահատիկի և անասնապահությունն անասնակերով ապահովվածության մակարդակի բարձրացումը, որը բխում է նաև հանրապետության գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի լիարժեք օգտագործման անհրաժեշտությունից:

Հանրապետության բարձր լեռնային և սահմանամերձ համայնքներում գյուղացիական տնտեսությունների մոտ հացահատիկային մշակաբույսերից ստացվող եկամտաբերությունն ավելացնելու և հողերի նպատակային և արդյունավետ օգտագործման մակարդակը բարձրացնելու նպատակով, ներկայացվող ծրագրով առաջարկվում է ՀՀ բարձր լեռնային և սահմանամերձ համայնքներում հացահատիկային բոլոր մշակաբույսերի փաստացի ցանքերի համար, իսկ ՀՀ բոլոր համայնքներում գարնանը կատարված եգիպտացորենի

	<p>փաստացի ցանքի համար, յուրաքանչյուր հեկտարին տրամադրել 40000 դրամ սուբսիդիա:</p> <p>Ծրագրի իրականացման տարիներին (2015-2017թթ.) կանխատեսվում է հացահատիկային մշակաբույսերի և եգիպտացորենի ցանքատարածությունների կտրուկ ավելացում:</p>
2.	Ընթացիկ իրավիճակը և խնդիրները
	<p>Հանրապետության սահմանամերձ և բարձր լեռնային համայնքներում գյուղատնտեսական տնտեսավարողները գործում են բարդ պայմաններում և այդ գոտու բնակլիմայական պայմանները հիմնականում բարենպաստ են հացահատիկային մշակաբույսերի մշակության համար: Սակայն ստեղծված իրավիճակում հացահատիկային մշակաբույսերի եկամտաբերությունը նշված գոտում շատ փոքր է: Դրա հետ մեկտեղ հացահատիկային մշակաբույսերի տեղական արտադրության ծավալները ապահովում են ցածր ինքնաբավություն: Հետևաբար նշված խնդրի լուծումը պահանջում է այդ գոտում հացահատիկային մշակաբույսերի մշակության աջակցության տարբեր մեխանիզմների կիրառում:</p>
3.	Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը
	<p>Վերջին տարիներին ՀՀ կառավարության կողմից իրականացվում են մի շարք աջակցության ծրագրեր, որոնք նպաստում են հողերի նպատակային և արդյունավետ օգտագործման մակարդակի բարձրացմանը և գյուղացիական տնտեսությունների եկամտաբերության ավելացմանը, մասնավորապես՝ մատչելի գներով պարարտանյութերի և դիզելային վառելանյութի մատակարարման, գյուղատնտեսական վարկերի սուբսիդավորման և այլ ծրագրեր:</p> <p>Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հողօգտագործողներին հատկացվող մի շարք պետական աջակցության ծրագրերի արդյունքում հացահատիկային մշակաբույսերի ցանքային տարածությունները զգալիորեն ավելացել են՝ 2010 թվականին այն կազմել է 159 հազար հեկտար, համախառն բերքը՝ 326,4 հազար տոննա, 2013 թվականին՝ 178,3 հազար հեկտար, համախառն բերքը՝ 548,7 հազար տոննա: Ցանքատարածությունները ավելացել են 19,3 հազար հեկտարով, համախառն բերքը՝ 222,3 հազար տոննայով:</p> <p>Անհրաժեշտություն է այս բնագավառում աջակցության քաղաքականության շարունակումը և դրա ձևերի կատարելագործումը:</p>
4.	Կարգավորման նպատակը և բնույթը

	<p>Ծրագրի նպատակն է՝ հանրապետության հողօգտագործողներին հասցեական աջակցության միջոցով հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի բարձրացումը, արդյունքում հացահատիկային մշակաբույսերի արտադրության ծավալների և տնտեսավարողների եկամուտների ավելացումը:</p>
5.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք
	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն,</p>
6.	Ակնկալվող արդյունքը
	<p>Գյուղատնտեսության հողային ռեսուրսների օգտագործման վիճակի բարելավում: Հանրապետության բարձր լեռնային և սահմանամերձ համայնքներում հացահատիկային մշակաբույսերի, այդ թվում նաև եգիպտացորենի արտադրության ծավալների ու գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացում, հանրապետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացում:</p>
7.	Այլ տեղեկություններ
<p>ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵԼԻՔ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ</p>	
1.	Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը
	<p>Նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների կատարելու անհրաժեշտություն չկա:</p>
2.	Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը
	<p>Նախագծի ընդունման կապակցությամբ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների չկան:</p>
7.	Այլ տեղեկություններ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1.	Հասարակությանը նախագծի մասին իրազեկումը
	Նախագծի մասին հասարակությանը չի իրազեկվել:
2.	Հասարակության մասնակցությունը նախագծմանը և/կամ քննարկումներին
	Նախագծմանը և/կամ քննարկումներին հասարակության մասնակցություն չի ունեցել
7.	Այլ տեղեկություններ